

Ընտանիքակենտրոն նեոնատալ խնամքի սկզբունքները

Հաշվի առնելով աշխարհի մի շարք երկրների փորձով ապացուցված Ընտանիքակենտրոն նեոնատալ խնամքի դրական ազդեցությունը նորածնային առողջության և բուժման ելքի վրա,

Գիտակցելով, որ երեխան ընտանիքի մաս է կազմում, և երեխայի բարեկեցությունը և առողջությունը պետք է դիտարկել նաև ընտանիքի հոգեզգայական նպաստավոր միջավայրի համատեքստում՝

Նեոնատալ բժշկության հայկական ասոցիացիան

Խրախուսում է Ընտանիքակենտրոն նեոնատալ խնամքի ներդրումը Հայաստանում գործող նորածնային ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում և

Կոչ է անում առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

1. **Հարգանք.** նորածնի և նրա ընտանիքի արժանապատվության հանդեպ հարգանքը բուժանձնակազմի վարքագծի կարևոր բաղադրիչն է:
2. **Մատչելիություն.** ընտանիքը և առաջին հերթին ծնողները նորածնի կյանքի անբաժանելի մասն են, և բուժհաստատությունները պարտավոր են ծնողներին տրամադրել անարգել այցելությունների հնարավորություն, որը կարող է միայն սահմանափակվել բուժհաստատության կողմից հստակ ձևակերպված կանոններով՝ պայմանավորված նորածնի անվտանգությունից և առողջական վիճակից:
3. **Ներգրավում.** բուժհաստատությունները պետք է աջակցեն ծնողների մասնակցությանը նորածնի խնամքին և այդ նպատակով ժամանակ տրամադրեն նորածնային խնամքի պարզ և անհրաժեշտ հմտություններ սովորեցնելուն:
4. **Տեղեկատվություն.** ծնողները կանոնավոր կերպով պետք է ստանան նորածնի առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական և անկողմնակալ տեղեկատվություն:
5. **Երկրորդ կարծիքի իրավունք.** ծնողներն իրավունք ունեն իրենց երեխայի առողջական վիճակի վերաբերյալ մասնագիտական երկրորդ կարծիք ստանալ այլ բժիշկներից կամ բուժհաստատություններից, ինչի համար բուժհաստատությունը պետք է ծնողներին ապահովի նորածնի առողջական վիճակի մասին անհրաժեշտ տեղեկատվությամբ:
6. **ԿԿԽ խրախուսում.** Կրճքի կաթով նորածինների սնուցումը պետք է լինի ծնողների հաճախակի այցելությունների կարևոր նպատակներից մեկը, և բուժհաստատությունը պետք է ձգտի ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ կրճքի կաթով նորածինների սնուցումը կազմակերպելու համար: